ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-09
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 15 հուլիսի, 2024թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Պալեանս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Շանթ Խայալեանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 01.03.2024թ. ««11009 Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 366-Ա և 11.06.2024թ. «Մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատելու և դրամաշնորհի պայմանագրի նախագիծ ներկայացնելու մասին» թիվ 1106-Ա հրամանը, «Բամբլ-Բի» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5-րդ կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել գումարից 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ՝ հարկերը):

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը պայմանագրի 5-րդ կետում սահմանված կարգով և ժամկետներում.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան և առանձնացված հաշվառում:

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով նախարարություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե և հատուցել կողմի պատճառած վնասները՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.9 Դրամաշնորհի շրջանակներում ստացված դրամական միջոցները բաշխել առանձնացված բանկային հաշվի (հաշվեհամարի) միջոցով:

2.4.10 **Ապահովել ակտիվ մասնակցություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «Գաղափարի փուլ» դրամաշնորհային մրցույթի հաղթող ընկերությունների համար նախաձեռնված և իրականացվող ինկուբացիոն բնույթի կրթական դասընթացներին:**

2.4.11 Պայմանագրի կամ փուլի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել Կազմակերպության գրավոր առաջարկի առկայության դեպքում: Ընդ որում առաջարկը պիտի ներկայացվի պայմանագրի կամ տվյալ փուլի ժամկետը լրանալուց առնվազն 10 օրացուցային օր առաջ:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը

(հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում էն իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 75 տոկոսը՝ 3,750,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին:

5.2 Մնացած գումարը՝ պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 25 տոկոսը, 1,250,000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, փոխանցվում է կազմակերպության հաշվին՝ սույն պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվություններն ընդունելուց, նախարարության և կազմակերպության միջև պայմանագրի արդյունքն ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ծրագրի շրջանակում հաղթող ճանաչված կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն ավարտել մինչև ոչ ուշ, քան 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5 Նախարարության կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ www.hti.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ [illegible]

____
(ստորագրություն)

Կազմակերպություն

«Պալեանս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Արգիշտի փ., շ 7/4, բն 118
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ [illegible]
ՀՎՀՀ 02851683
Տնօրեն՝ [illegible]

____
(ստորագրություն)

Հավելված 1
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-09 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N /կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (ՀՀ դրամ)
1.	Սարքավորումների ներդրում	Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապարատային բաղադրիչների արժեքը: Այն ներառում է շղթայի ձևավորում, տպագրություն շրջագծային դիզայն, միացնող սենսորներ, տեսախցիկներ, լույսեր, ջեռուցման և հովացման համակարգեր, արևային վահանակների համակարգերի ինտեգրում, քաշի չափման սարքավորումներ և այլն:	պատվիրում և գնում	բոլոր հիմնական ապարատային պահանջների ապահովում	15.08.2024	29.08.2024	400,000
2.	Դիզայն նոր փեթակներ և կառուցել	Փեթակների նախատիպերի նախագծում, նյութերի մատակարարում և մեղուների առողջության և արտադրողականության համար օպտիմիզացված փեթակների կառուցում	Նախագծում և պատվիրում	առաջին փեթակի ձևավորումը դրսից, բերքահավաք և ապարատային սարքավորում	15.08.2024	29.08.2024	400,000
3.	Դիզայն և 3d տպագրությամբ փեթակների շրջանակներ	Փեթակների մասնագիտացված շրջանակների նախագծում և 3D տպագրություն: Այս շրջանակները պատրաստված են ճշգրտությամբ՝ օպտիմալացնելու մեղրի հավաքման արդյունավետությունը և նվազագույնի հասցնելու մարդու շփումը մեղուների հետ:	Դիզայնի պատվիրում	փեթակների շրջանակների դիզայնի առկայություն	15.08.2024	29.08.2024	500,000
4.	3d տպիչ	Մեղրի հավաքման համակարգի բաղադրիչների մշակում Տպիչը կօգտագործվի մասնագիտացված մասեր և մեխանիզմներ ստեղծելու համար, որոնք հեշտացնում են մեղրի արդյունավետ և ավտոմատացված	3d տպիչի պատվիրում և տպագրություն	փեթակների շրջանակների առկայություն	15.08.2024	29.08.2024	500,000

		արդյունահանումը, նվազագույնի հասցնելով ձեռքի աշխատանքը և բարձրացնելով արտադրողականությունը:					
5.	Սերվեր	Սերվերը կծառայի որպես ծրագրի տվյալների կառավարման և մշակման հնարավորությունների ողնաշարը, որը կհեշտացնի մեղուների հետ կապված տվյալների պահպանումը, որոնումը և վերլուծությունը, որոնք հավաքագրվում են փեթակների մոնիտորինգի համակարգից: Այն կաջակցի ծրագրային հավելվածների, ալգորիթմների և մեքենայական ուսուցման մոդելների մշակմանը և տեղակայմանը մեղվաբուծության պրակտիկայի օպտիմալացման և փեթակների արտադրողականությունը բարձրացնելու համար:	պատվիրում	Զարգացման սերվերի առկայություն	15.08.2024	29.08.2024	440,000
6.	Արևային մարտկոց և մարտկոցային համակարգ	Arduino-ին միացված էլեկտրական սարքերի և սենսորների և այլ սարքերի էներգիայի ապահովում:	պատվիրել	Էլեկտրաէներգիայի հոսքը սարքավորումների համար	16.09.2024	30.09.2024	150,000
7.	3D տպիչի հեղուկ խեժ տպագրության համար	Հեղուկ խեժը կարևոր է SLA և DLP 3D տպագրության համար, քանի որ այն ամրանում է հատուկ լույսի ներքո՝ ստեղծելով տարբեր հատկություններով մանրամասն առարկաներ:	պատվիրել	Նյութեր տպիչի համար	15.08.2024	29.08.2024	120,000
8.	Սարքավորում ների դիզայներ և հավաքող	Նախագծի համար անհրաժեշտ ապարատային բաղադրիչների նախագծման և հավաքման համար՝ ապահովելով ֆունկցիոնալությունը և համատեղելիությունը մեղուների մոնիտորինգի համակարգի հետ:	պատվիրել	Սարքավորումը պատրաստ է օգտագործման համար	02.09.2024	16.09.2024	230,000
9.	Սարքավորում ներ python Ծրագրաշարի մշակում	Ծրագրային լուծումների մշակման համար, որոնք հարմարեցված են ապարատային բաղադրիչների ֆունկցիոնալությունը ինտեգրելու և օպտիմալացնելու համար:	ստուգել կոդերի որակը, փորձարկեք այն, կարգավորեք այն, որպեսզի ընդունի տվյալներ	ապարատային տվյալների ներդրման հիմքը	02.09.2024	16.09.2024	150,000
10.	Արհեստական ինտելեկտի	AI տվյալների հավաքածուների ստեղծման, փորձարկման և կառավարման համար: Նրանք կվերահսկեն տվյալների	ստուգել կոդերի որակը, փորձարկեք	Արհեստական ինտելեկտը	15.08.2024	29.08.2024	420,000

	տվյալների հավաքակազմի ստեղծող, փորձարկող, արտադրություն և հայտնաբերում ավագ մշակող	հավաքածուների արտադրությունն ու հայտնաբերումը, ապահովելով որակ և համապատասխանություն AI մոդելի ուսուցման և իրականացման համար:	այն, կարգավորեք այն, որպեսզի ընդունի տվյալներ	հայտնաբերում է առողջ ոչ առողջ մեղուներին			
1.	Devops սերվերի մենեջեր կրտսեր	DevOps ինժեներ վարձելու միանվագ վճարումը: Նրանք պատասխանատու կլինեն զարգացման և տեղակայման գործընթացների պարզեցման, ծրագրի ենթակառուցվածքի հուսալիության, մասշտաբայնության և անվտանգության ապահովման համար, վճարումը: Նրանք պատասխանատու կլինեն զարգացման և տեղակայման գործընթացների պարզեցման, ծրագրի ենթակառուցվածքի հուսալիության, մասշտաբայնության և անվտանգության ապահովման համար,	պատվիրել	Սերվերների կազմաձևում և ծրագրերի տեղադրում	15.08.2024	29.08.2024	150,000
.2.	Full stack Ծրագրավորող ավագ	Պատասխանատու է նախագծման, ներդրման և պահպանման ենթակառուցվածքի համար՝ օգտագործելով Spring Framework:	պատվիրել	կոդավորել հավելվածի ամբողջական ցիկլը	01.11.2024	15.11.2024	650,000
13.	React Native ծրագրավորող ավագ	React Native սարքերի համար բջջային հավելվածի մշակման, համատեղելիության և օգտատերերի օպտիմալ փորձի ապահովման համար:	պատվիրել	կոդավորել բջջային հավելվածների ամբողջական ցիկլը	01.11.2024	15.11.2024	650,000
14.	Հարկեր	Պետական իշխանությունների կողմից բիզնեսի վրա գանձվող հարկերը. Այն ներառում է կորպորատիվ եկամտահարկերը, վաճառքի հարկերը, գույքահարկերը, աշխատավարձի հարկերը և օրենքով պահանջվող այլ հարկային պարտավորություններ: Այս ծախսերը էական նշանակություն ունեն հարկային կանոնակարգերի պահպանման և բիզնեսի ֆինանսական կայունության ապահովման համար:	Հարկեր	պետական հարկերը	15.11.2024	29.11.2024	140,000

5.	Կոմունալ ծառայությունն եր և ինտերնետ ստատիկ IP-ով	Կոմունալ ծառայությունների (օրինակ՝ էլեկտրաէներգիա, ջուր և գազ) և ինտերնետ ծառայությունների ծախսեր: Այն ներառում է ամսական վճարումներ կոմունալ ծառայությունների և ինտերնետ ծառայություններ մատուցողների համար՝ անխափան աշխատանքն ապահովելու համար:	ստատիկ ip սերվեր	ստատիկ ip սերվերի համար	15.11.2024	29.11.2024	100,000
	Ընդամենը՝ 5,000,000 ՀՀ դրամ						

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀԿՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գևորգյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Պալեանս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Արգիշտի փ. 7/4, բն 118
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570028652010100
ՀԿՀՀ 02851585
Տնօրեն՝ Լուսինե Խաչատրյան

(ստորագրություն)

Հավելված 2
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-09 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, Մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	«Պալեանս» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Արգիշտի փ. շ 7/4, բն 118 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570078265200100 ՀՎՀՀ 02851585 Տնօրեն՝ Շանթ Խայալեան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 3
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-09 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հրավիրով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Միջոցառման												
			Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ի՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999	Դրամաշնորհային ծրագիր						3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	5,000,000	**5,000,000**

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Պալեանս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Արգիշտի փ, շ 7/4, բն 118
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ [illegible]
ՀՎՀՀ 02851588
Տնօրեն՝ [illegible]

(ստորագրություն)

Հավելված 4
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-09 պայմանագրի

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՁՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	«Պալեանս» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Արգիշտի փ, շ 7/4, բն 118 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570078265200100 ՀՎՀՀ 02851585 Տնօրեն՝ Շանթ Խայալեան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝_____
Նախարարությունը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	Փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսա՛նում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-09 պայմանագրի

<u>ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ</u>

Ծրագրի անվանումը՝ Բամբլ-Բի
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի) 1.07.2024 / 31.10.2024
Ծրագրի նկարագրություն

Մեղուների պոպուլյացիայի նվազումը լուրջ վտանգ է ներկայացնում գլոբալ գյուղատնտեսության համար՝ ազդելով մրգի, բանջարեղենի և ընկույզի արտադրության համար կարևոր փոշոտման վրա։
Անդրադառնալով այս մարտահրավերին՝ AI-ի հետ ավտոմատացված մեղուների փեթակը հեղափոխություն է անում կայուն գյուղատնտեսության մեջ։
Բարձր ճշգրտության սենսորները վերահսկում են փեթակների պարամետրերը, որոնք իրական ժամանակում պատկերացումներ են տալիս փեթակների պրոակտիվ խնամքի համար։ AI ալգորիթմները վերլուծում են տվյալները՝ առաջարկելով հետախուզություն փեթակների վիճակի և մեղուների գործունեության վերաբերյալ՝ հնարավորություն տալով ժամանակին միջամտություններ կատարել։
Առողջության առաջադեմ մոնիտորինգը հետևում է առանձին մեղուների բարեկեցությանը, ինչը հեշտացնում է խնդիրների վաղ հայտնաբերումը։ Մեղրի բերքի ճշգրիտ գնահատումը, օգտագործելով փեթակների տվյալները և AI-ի վրա հիմնված մոդելները, ապահովում են արդյունավետ պլանավորում և կայուն մեղրի արտադրություն։ Այս նորարար լուծումը պաշտպանում է սննդի անվտանգությունը, կենսաբազմազանությունը և մեղուների պոպուլյացիաները՝ միաժամանակ կիրառելով էկոգիտակցական պրակտիկա։

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ [illegible] ________________ (ստորագրություն)	«Պալեանս» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Արգիշտի փ., 2 7/4, բն 118 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570078268200100 ՀՎՀՀ 02651585 Տնօրեն՝ [illegible] ________________ (ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան « » հուլիս, 202[illegible]թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Նախարարություն», մի կողմից «Պալեանս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Շանթ Խայալեանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ Համաձայնագիր, հետևյալի մասին.

2024թվականի ապրիլի 14-ին հայտարարված ԲՏԱՆ-ԴՄ-2024/01 ծածկագրով մրցույթի հրավերի՝ նից պայմանագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 75 տոկոսը՝ 3,750,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին:

5.2 Մնացած գումարը՝ պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 25 տոկոսը, 1,250,000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, փոխանցվում է կազմակերպության հաշվին՝ սույն պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվություններն ընդունելուց, նախարարության և կազմակերպության միջև պայմանագրի արդյունքն ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ծրագրի շրջանակում հաղթող ճանաչված կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն ավարտել մինչև ոչ ուշ, քան 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«Պալեանս» ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	ՀՀ ք. Երևան, Արգիշտի փ. շ 7/4, բն 118
ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900010039444	Հ/Հ 157[illegible]
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 02851585
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	Տնօրեն՝ Շանթ Խայալեան
(ստորագրություն)	(ստորագրություն)